



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

12.04.2019թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 11 անդամները:

Բացակայում են Ն.Վարդանյանը, Մ.Պողոսյանը, Ա.Գասպարյանը և Գ.Երիցյանը

Նիստը վարում է համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը:

Համայնքի ղեկավարի տեղակալ **Վ. Չիլինգարյանի** հրավերով ավագանու նիստին մասնակցում են **համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/պ Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Ս.Շահնազարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:**

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Հաստատել համայնքի ավագանու թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝

1. Կինոթատրոնի շենքը համայնքին վերադարձնելու նպատակով Հայ Առաքելական եկեղեցուն դիմելու մասին:
2. Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի հաշվետվությունը հաստատելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
4. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
6. Քաղաքացի Վահե Բալբաբյանին Չարենցավան համայնքի Արզական գյուղի վարչակալ սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.01793 հա հողամասը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ տրամադրելու համաձայնություն տալու մասին:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -11

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Կինոթատրոնի շենքը համայնքին վերադարձնելու նպատակով Հայ Առաքելական եկեղեցուն դիմելու մասին:

/Ձեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և 14-րդ հոդվածի 2-րդ կետով, հաշվի առնելով նախաձեռնող խմբի ներկայացուցիչ Չարենցավան համայնքի բնակիչ Գևորգ Հակոբյանի 20.03.2019թ. թիվ 839/04 դիմումը, **առաջարկում եմ** դիմել Հայ Առաքելական եկեղեցուն խնդրանքով՝ Չարենցավանի կինոթատրոնի շենքը Չարենցավան համայնքին փոխանցելու, որպես համայնքի սեփականություն: Համայնքին փոխանցելու արդյունքում նշված շենքի օտարման որևէ գործողության վերաբերյալ որոշում կկայացվի տեղական հանրաքվեի միջոցով:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի հաշվետվությունը հաստատելու մասին:

/Ձեկ. Ս.Շահնազարյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 8-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի՝ **առաջարկում եմ**, հաստատել Չարենցավան համայնքի 2019 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդումը:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին :

/Զեկ. Ս.Շահնազարյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, առաջարկում եմ. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 87-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հաստատված բյուջեի վարչական մասի՝

ա. 7421 «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» հոդվածի «5354.1» թիվը փոխարինել «5396.75» թվով,

բ. 7422 «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» հոդվածի «60795.1» թիվը փոխարինել «64290.1» թվով,

2) Հաստատված բյուջեի ֆոնդային մասի՝

ա. 7332 «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)» հոդվածի «599.2» թիվը փոխարինել «50869.2» թվով,

3) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0133 ՔԿԱԳ պատվիրակված լիազորությունների 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» սինթետիկ հաշվի «4857.1» թիվը փոխարինել «4899.75» թվով,

բ. բ. 0661 «Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ «557.0» թիվը փոխարինել «4052.0» թվով,

4) Համայնքի բյուջեի ծախսերի ֆոնդային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0611 «Բնակարանային շինարարություն» - ի՝

աա. 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվի «950.0» թիվը փոխարինել «0» թվով,

աբ. 5122 «Վարչական սարքավորումներ» սինթետիկ հաշվին հատկացնել 950.0 հազ. դրամ:

բ. 0451 «Ճանապարհային տրանսպորտ» - ի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվի «16771.1» թիվը փոխարինել «67041.1» թվով:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 11

դեմ - 0

ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/: